38. ՔԱԼԱԳՅԲԱՋՆԵՆ

Մհետե մին մարթու տոն տուզնընաս ա։ Մին քշեր հաՅմին էտ մարթտ եր ա կնաս, էրկու եզն ա ինիս, մինը յոր ա ունես, տնես բազարը, թա ծախե։ Իրեք քյոսա՝ ուրուր ըն ընգես, վեր եզնը դնու կյինավ ինքյ օնին։

Մին քյոսա՝ մի խիլլա՝ շրտու-մորտե յա ընես, շրտու-մորտե, ախրը կյաս էտ մարթիտ ըսես.— Ա՛ հընգեր, էտ դանան հի՞նչավ ըս տաս։

Համին էտ մարթտ մին խիլլա՝ մտծես ա, մտծես, ըսես. — Պա՝, յրես եզն ըմ պերա՞լ, եզնեն դանան թողալ ըմ կյումումը, էս խե՞ իտի յա ասըմ։

Մի խիլլի վախտ անց, քյոսեն էն մին հնգերը տսնաս ա, վեր ռաշկենը խեր չրրավ, ինքյը կյաս ա ժուլիկվաչի ըսես. — Ա՛ հընգեր, էտ դանան հի՞նչավ ըս տաս, հո՞ւնց ըս տաս։

Էտ մարթտ առռե շրշկլվես ա, գյիդաս չի, թա հինչ անե, ըտրա շողաբը կրես չի տա, զայամիշ ա ինիս, մնաս դիքյ վրենը։

Մին խիլլա կնալանը ետը զինքյը կլոխն ա հվրքես, ըսկսես ինքյը-ինքյը քնենքյ անելը, թա տրեսնա դա՞նա յա պերալ բազար, թա եզնը։

ՀաՅմին էտ վախտրտ քյոսին իրեքինչի հընգերը կյաս ա, ըսես. — Դայի, էտ բիժին հինչա՞վ կտաս, յրես մուշտարի պիրիմ, վեր ծախիս։

էս դոնումըս էտ մարթը առռե դուզն ասած շշկլվես ա։

Պատառ կնաս ա, ինքյն-ինքյը մտածես, ասես ա.— Բալի շիլ ըմ ընդալ, դանան պերալ եզանը տեղ։

Պատառ շրտը-մորտի յա ընես, վերչը էս մրեծ եզնը դնու կյինավ տաս քյունսեն։ Փուլըն էլ խրջիս չի, իրեսեն ճիրավը ծլիս ա, տինիս շրբումը, ընդնես հղեն, կիճի-կիճի բիդի շենը կյաս։ Ամմա հղեցը կյաս տեղը, տեղը տեղ չի տաս, օժով ընգնես ա տոն։

Մին խիլլա վախտ ասկի ըտրա մհար խուսես չի։ Կնեգյը վրեանները լվընաս ա, փթրոկ ա ինիս ըրած, մին աման նի յա քցես, տաս մարթեն։ Մարթը ուտես ա, նի մննես տրեղը։ Ամմա տրեղմը քոնը տնես չի, մրտածմունքը ըտրան վեր ա կուխես։

Ախրը էտ մարթտ հալա հինչու ըրալ ա, ըրալ չի, էտ ուրան տրեղը, կնգանը յրան էլ կզնվես ա, ասես.— Ճրաքյը նի կցրու, քյինի տես դանան ըմ տարալ բազար, թա եզնը։

Կնեգյը լաչառ-հայասրզեն մինն ա ինիս, էտ լհա վեր մարթը էտ խոսկը ասես ա, ասկսես ա ծվծվալը. — Հա՞ քու մար, հա՞ քու հար, տրես հալա՞, հո՞ւնց թա դանան ըմ տարալ, թա՞ եզնը, շոնշան տղա, էն մեծ եզնը դանու կյինավ ծախալ ըս, եկա՞լ, ասօրե աշխատանքիտ անըմը շատ ա իլա՞լ, քյեցալ ըս բազար ինձ հետե դրեյի կյործա՞լ։

Կնեգյն էլ ա մնաս շշկլված։

Մին խիլլի վախտ մտածես ա, վերչը ճրաքյը նի կցնես, քյիս յշիս, տրեսնա բալքյաս շիլ ա ընդալ մարթը, դանան տարալ բազար։

Էտ վեր քյինաս ա կյումը, տրսնաս ա եզնն ա տարալ, դուզ վեր դուզ տարալ ա դնու կյինավ տվալ, եկալ, թուրթումնը թուրմիշ ա ինիս։ Կյաս ա, տրեղը տրեզ չի տաս, նի յա մրննես տրեղը քոնը տնես չի՞, թա քոն ինի՞։

Քշերը շընրմուռտառ ըրրզնե յա տրսնաս։

Մին թարհրավ մարթը կնեգյ էտ քշեր լուսրցնես ըն։

Ռուրթանան մարթը եր ա կընաս, խելքը կլոխը հվրքես, տսնաս, վեր ասկի ուրան ըրածը մին պեն չի՞, մրթրվարի չի՞։ Ասկսես ա կընգանը քաթ անելը, թա՞ հո՞ւնց ա պտահալ։

Ասես ա.— Տրեռած պենին հետան խոսիլ չըն, հինչու տրեռալ ա, տրեռալ ա, պրծալ.—Կնգանը ասես ա.— Փուլը խարջիլ չպիտինքյ, պահիլ պիտինքյ, բալի կարիմ համին էտ քյունսենուն քալագյ կյամ։

Էն մին օրը եր ա կնաս, քյունսենուն տված փուլը յոր ունես, հղե ընիս դիրի բազարը։ Վեր հանես ա բազարը, տսնաս ա, համին քյունսենեն հեն ըն մին քյավթառ ծի տուս կալած բազարը, թա՞ ծա-

խին։ Մին խիլլի կնաս ա, համ էլ մտծես, թա հունց քյալաղ կյա էտ շան տղրոցը։ Վերչը էտ մարթտ ըսես ա, վեր բիդի քյալաղ կյա։

Մուտունաս ա ըտրանց նեստա, ըսես. — էտ քոռակտ հինչա՞վ կտաք, հո՞ւնց կտաք։

Քյուսենեն, վեր տսնաս ըն էտ մուշտարին շատ ա ճուր, ուրիրնաս ըն։ Ըսես ըն. — Պա էս քյավթառ ծիս, վեր սկի բաշիր չընես, թա կյորի օտե, հո՞ւնց լավ մարթ ա, վեր քուռակու կյինավ ինքյ ա ունես։

Էտ մարթտ դնեն հախեն նստա մին խիլլա խրեգյ տաս ա, ծին ինքյ ունես, մնացած փուլն էլ տաս ա ռանգյ ինքյ օնես, տնես։

Մին հեռու տեղ, մին յաբանա դուզում, ծին կպես ա, ռանգյ տաս, եր օնես տնես բազար։

Քյուսենեն ուզիս ըն թազա լավ ծին ինքյ օնեն։

Շոռ ըն տաս, շոռ, կլոխ չըն ընգնես, թա ռանգյ տված ծին ուրանց քյավթառ ծին ա։ Ըտրանք իրեք տակ փուլ ըն տաս, ծին իքյ ունես։

Էտ մարթտ էլ փուլը յոր ա ունես, դիրի շենը փխչիս։

Քյուսենեն ծին տնես ըն կպես, կյորեն քցես առաշկը։ Մին խիլլա վախտ կնաս ըն, ետնան քյիս տսնաս կյորեն հունցը առաչ ըն քցալ, ընդի, ծին պռոշն էլ ա նի չի տվա՞լ։

Համին էտ վախթտ կլոխ ըն ընգնես, վեր էտ մարթտ ուրանց քյալաղ ա եկալ։ Ըտրանք մսլահաթ ըն ընես, վեր հնգեր-հնգեր քյինին համին էտ մարթիտ սպանեն, փուլը յոր օնեն։

Կնեգյը ըսկնաս ա, վեր կյլական ըն մարթին ըսպանեն, մարթին կնդ-կնդ պտմես ա։

Մարթը վեր անշուկ ա ունես, պրծնես, եր ա կնաս, քյիս ծմական էրկու ըլբաստրակ փռնիս, պիրիս, մինը կրըվաթեն վրեննան, կպես, մինը յոր ունես, քյիս հոնձ։

Քյուսենեն կյաս ըն, ըտրա կնդանան հրրցնես։ Կնեգյըն ըսես ա, վեր մարթը հեն ա հունձատեղ։ Հղեն նշանց ա տաս, ըտրանք քյիս ըն։ Վեր տեղ ըն նի հսնես, էտ մարթետ ըսես ըն. — Քյրեզ ըսպաննական ըք, մեր տված փուլը մրեզ տոր։

Էտ մարթտ ըսես ա. — Պատառ դինչացեքյ, հաց կերեքյ, քշերս էլ քոն կինիքյ, ետնան էլ հինչ կանիքյ-կանիքյ։— Ուրան նհետ տարած ըլբաստրակեն մինին ըսես ա. «Քյինի կնդանս ասե, հաց պրդռաստե, տեղ շինի»։

Ըտի յա ըսես, ըլբաստրակը պեց թուղես։ Ըլբաստրակը պեց ա ընգնիս, թլակա պըրծածու նըման յաբանտ դուզնըվեր փիչիս։

Ուրուգյունան չախը ըտրանք կյաս ըն տոն, տսնաս կնեգյը հացը խուրուգյնեն հըզըրած, մնաս ըն մաթ մնացած, վեր տեսնաս ըն ըլբաստրակը կրըվաթան կապած։ Կլոխ չըն ընգնես, գյիդաս ըն, թա համին ըլբաստրակն ա։ Ըսես ըն. — Հինչքան փուլ ուղիս ըս, տանք, թաքի էտ ափաթ պենըտ մըեզ յրա ծախիս։

Քյուսենեն մին խիլլի փուլ ըն տաս, ըլբաստրակը յոր օնես, դիբի ուրանց տոն հղե ինիս։ Հղենի ըլբաստրակը պեց ըն թողես, թա խաբար տանե, տանան հաց ըղարկեն։ Ըլբաստրակը մին տըեղ-նըեր ճղես ա, ծըլկես։ Ըտրանք ըսես ըն, թա տուգնըթունան մըեռ-նին, վեր կյաս ըն տըսնաս հացը պադրաստ չի՞։

Քյուսենեն մին էլ ըն հզրվես, վեր կյան էտ մարթետ ըսպանին։ էտ մարթտ, վեր ըսկնաս ա, մին հավ ա փռնես մուրթես, ճղմաղեն-քյը ըռնավ լցնես, քցես կնգանը ճիտը, համ էլ կնգանը սվրցնես ա, թա վեր ինքը ասե, էս ըրա, էն ըրա, հանցու վեր կնեգյը ղասիդ տե-ղան ետրետե տուրուր կյա։

Քյուսենեն կյաս ըն ըսես. — Քյըեզ ըսպնական ընք, տու մըեզ խափալ ըս։

էտ մարթտ ըսես ա. — Եկեքյ հաց օտինք, զուրուց անինքյ, ետավ։

Կնգանը հըրըմըյես ա վեր փլավ չինի, ճաշ իփի։ Կնեգյը ղասիդ տեղան ետրետե յա տուրուր կյաս։ էտ վախտտ էտ մարթտ ղաման տընես ա, քսիս կնգանը վզին, ճղմաղենքյը կտրես, կնեգյը խըռ-խըռցնես ա, ստըսոտ մըռնես։

էտ մարթտ մին թութաղյ ա յոր օնես, տյնես կնգանը վզին փչես, կնեգյը լոք ա տաս, եր կնաս։

Քյուսենեն մաթն ըն մնաս։ Ըսես ըն. — Հինչքան ուզես ըս փուլ կտանք, թաքյ լհա էտ թութաղյըտ մըեզ տաս։

Փող ըն տաս, թութաղյը յոր ունես տնես։ Կիճի հնգյերը տնես ա կնգանը վեզը կտրես, էտ թութաղյավըտ փչես, ամմա կնեգյը եր չի կնաս։ էտ մտծես ա, ըսես. «Խե՞ բիդի յըես իմ կնգանս ըսպանիմ, իմ հնգյերս ըսպանի վեչ»։ Թութաղյը տաս ա հնգերեն, ըզետ տնես ա կնգանը ըսպնես, թութաղյը տնիս վզեն, փչես։ Կնեգյը յեր չի կընաս։

էտ էլ էն մինին նման մտծես ա, ըսես. «Խե՞ բիդի յըես իմ կընգանըս սպանիմ, էն մին հնգերս ուրան կնգանը սպանե վեչ»։

Թութաղյը տաս ա էն մին հընգերեն, էտ հընգերտ տնեսա ուրան կնգանը ըսպնես, թութաղյին լուլլավը փչես, կնեգյը ետ չի կյաս։

Քյուսենեն կյաս ըն ուրուր պտմես, ըսես. — Էս դոնումն էլ էտ մարթըտ մրեզ լավ քյալագյ եկավ։

Ըտրանք մալըհաթ ըն ընես, վեր քյինին, էտ մարթեն ըսպանեն։ Էտ մարթտ էլ, վեր ըսկնաս ա, կյաս ա ուրան բխչումը մին փոս ա փորես, նի մննես մեչը, կնգանը ըսես. — Ա՛ կընեգյ, վեր կյան հրցնեն, կասես մրեռալ ա։

Քյուսենեն կյաս ըն հրցնես, կնեգյն ըսես ա. — Մեռալ ա։

Ըտրանք փոխրփեշման ետ ըն տռնաս, քյիս ուրանց տները։ Էտ մարթըտ էլ տուս ա կյաս, ըսկսես ըն մինտեղ լավ ապրելը։

Ժողովուրթեն խոսկը ըտրա հետե ըսես ա. «Վեր կտրե, խոր կտրե, տու վրս մեչը ընգլական»։